

Ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի 65-ամյա հորեցյանը

EDN: IGXQSV

Ժամանակն իր անդադար հոսքով երբեմն անակնկալի է բերում: Գալիս է մի պահ զարմանում ես, թե երբ այսքան մեծացա, այսքան իրադարձությունների ականատեսը եղա, այսքան իրողություններ կենդանի վկան դարձա: Սովորաբար երբ խոսքը վերաբերում է անցած տարիները գնահատելուն, մարդկանց մեծ մասը վստահաբար ամենաերանելի հատվածը համարում է ուսանողական տարիները: Հենց այդ, ուսանողական շրջանից են ճանաչել մերօրյա լավագույն պատմաբաններից պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Աղասիի Մելքոնյանին...

2026 թ. փետրվարի 16-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդլայնված գիտական խորհուրդը նվիրված էր մեր օրերի հիրավի վաստակաշատ գիտնական Ա. Մելքոնյանի 65-ամյակին: Առաջին հայացքից հերթական, պաշտոնական գործընթաց էր, սակայն միայն առաջին հայացքից: Դահլիճում իրար էին խառնվել փաստերն արձանագրելու, ջերմ շնորհավորանքներ հղելու և հույզերը դժվար զսպելու ձգտումները:

Բացման խոսքով հանդես եկած փոխտնօրեն Կարեն Խաչատրյանը հակիրճ ներկայացրեց Ա. Մելքոնյանի կենսագրությունը և նշեց, որ Աշոտ Մելքոնյանը ծնվել է 1961 թվականի փետրվարի 16-ին, Ախալքալաքում, վաստակավոր լրագրող Աղասի Հարությունի Մելքոնյանի ընտանիքում: 1967 թ. ընդունվել և ոսկե մեդալով 1977 թվականին ավարտել է Ախալքալաքի Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 4 հայկական միջնակարգ դպրոցը: 1977–1982 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է գերազանցության դիպլոմով: 1982–1985 թթ. եղել է ասպիրանտ նույն համալսարանի Հայոց պատմության ամբիոնում: 1989 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1986 թվականի հոկտեմբերից աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում՝ նախ որպես լաբորանտ, ապա՝ գիտաշխատող, հետո գիտքարտուղար ապա գիտական հարցերով փոխտնօրեն: 2002 թվականի ապրիլի 26-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Ջավախքը XIX դարում և XX դարի I քառորդին» թեմայով: 2004 թվականին ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 2006-2014 թթ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ էր: 2014 թվականին Աշոտ Մելքոնյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:



Աշոտ Մելքոնյանը 2002 թվականի հուլիսից ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրենն է: Նա գլխավորում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական և պատմության ինստիտուտում գործող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհուրդները: ԵՊՀ խորհրդի, պատմության ֆակուլտետի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդների և մի շարք գիտական հանդեսների (Պատմաբանասիրական հանդես, Լրաբեր հասարակական գիտությունների, Բանբեր Հայաստանի արխիվների, Կանթեղ, Պատմություն և մշակույթ և այլն) խմբագրակազմերի անդամ է: Նա 16 գրքի և ավելի քան 450 գիտական հոդվածի հեղինակ է: Աշխատությունները լույս են տեսել աշխարհի 14 երկրներում՝ ավելի քան 10 լեզուներով: Գիտական զեկուցումներով հանդես է եկել աշխարհի շատ երկրներում:

Աշոտ Մելքոնյանի գիտական հետաքրքրությունների շրջանակի մեջ մտնում են Արևմտյան Հայաստանի, հայկական հարցի, հայոց ցեղասպանության, Ջավախքի, պատմության, հայ-վրացական հարաբերությունների, Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցերը: Մելքոնյանի աշխատությունները լույս են տեսել Հայաստանում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Վրաստանում, Լիբանանում, Եգիպտոսում, Իրանում, Արգենտինայում,

Հունգարիայում՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն, պարսկերեն, իսպաներեն, թուրքերեն, հունգարերեն լեզուներով:

Այնուհետև շնորհավորական ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Աշոտ Սաղյանը: Ջերմ շնորհավորելով հորեյարին նա նշեց Ա. Մելքոնյանի վաստակը հայագիտության ասպարեզում և ընդգծեց նրա քաղաքացիական առողջ ու սթափ կեցվացքը տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ:

Այնուհետև ելույթ ունեցան երկարամյա գործընկերներից հանրագիտարանի գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանը, պրոֆեսորներ Էդիկ Մինասյանը, Էդիկ Գևորգյանը, Գևորգ Ստեփանյանը, Վահան Ղևոնդյանը, Սուրեն Սարգսյանը և այլք: Միմյանց լրացնելով նրանք նշեցին, որ պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը գիտական աշխատանքին զուգահեռ վարում է նաև ընդգրկուն մանկավարժական գործունեություն: Նա Հայոց պատմություն է դասավանդում Երևանի պետական համալսարանում, ՀՀ ԳԱԱ մագիստրատուրայում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում: 2004–2006 թվականներին եղել է նաև Երևանի բժշկական համալսարանի Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 16 թեկնածուական ատենախոսություն, որոնք նվիրված են Հայաստանի պատմական ժողովրդագրության և ցեղասպանության թեմաներին: Խմբագրել է տասնյակ գիտական աշխատություններ: 2010 թվականից Ա. Մելքոնյանը Հայոց պատմության և մշակույթի պատմության դասախոսությունների շարք էր իրականացնում Հայոց բանակում՝ նպատակ ունենալով բարձրացնել հայ զինվորականի պատմաճանաչողական և ռազմահայրենասիրական ոգին: Մելքոնյանը զեկուցումներով և դասախոսություններով հանդես է եկել մոտ երկու տասնյակ երկրներում կազմակերպված միջազգային գիտաժողովներում, սիյուռքահայ հասարակության առջև: Պատմագետ Ա. Մելքոնյանը 1997-2009 թթ. Արևմտյան Հայաստանում նկարահանած տեսանյութի հիման վրա պատրաստել է հեռուստատեսային ֆիլմեր («Կարոտի Էրզրի» (2006 թ.), «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» (2008 թ.) և այլն): 2007 թվականի օգոստոսի 10-ին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ Սևրի դաշնագրի օրը, նա բարձրացել է Արարատ լեռան գագաթը, և դրա հիման վրա ստեղծել «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» գիրքը և ֆիլմը («Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2008 թ.)՝ նվիրված հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին (1809 թ.) և Դորպատի համալսարանի պրոֆեսոր Փրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովյանի Արարատի գագաթ բարձրանալու 180-ամյակին (1829 թ.):

Յուրաքանչյուր ելույթ ունեցող ընդգծում էր հորեյարի բարի ու մարդասերի, լավագույն գործընկերոջ և անխնջ գիտնականի լուսեղեն կորպարը: Որոշ առումով առանձնացավ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, «Երկիր և տարածաշրջան» հանդեսի գիտական խմբագիր, պրոֆեսոր Ս. Սարգսյանի ելույթը: Նշելով, որ Ա. Մելքոնյանին ճանաչել է ուսանողական տարիներից, Ս. Սարգսյանը շեշտեց հորեյարին բնութագրող մի քանի հատկանիշներ, որոնց մասին չէր ասվել: Նախ ասվեց, որ Ա. Մելքոնյանը մեծ վաստակի տեր գիտնական լինելով հանդերձ՝ փայլուն ճանապարհի ընկեր է, որի առիավատյան մի քանի տարի շարունակ Արցախ ինչպես նաև Բելյուրթ այցելություններն են: Ս. Սարգսյանը նշեց նաև, որ Ա. Մելքոնյանն իր որդու գիտական ղեկավարն է եղել և ընդգծված շնորհակալություն հայտնեց նրա ղեկավարությամբ բոլոր ատենախոսություն պաշտպանածների կողմից՝ սրտացավ, խրախուսող, ոգևորող և հիմնախնդրի խրթին ծայքերը լավագույնս լուսաբանելու և օգնելու համար: Ելույթի վերջում Ս. Սարգսյանը շեշտեց նաև այն մեծ ներդրումը, որն ունեցել է Ա. Մելքոնյանը «Երկիր և տարածաշրջան» հանդեսը հիմնելու գործում, ապա ավելացրեց, որ իրենք հպարտ են, որ հորեյարը հիմնադրման օրվանից խմբագրակազմի անփոփոխ անդամն է:

Ամփոփելով գիտխորհուրդը, Կ. Խաչատրյանը թվարկեց Ա. Մելքոնյանի բազմաթիվ աշխատությունները: Այնուհետև հպարտությամբ շեշտեց, որ Ա. Մելքոնյանի անուրանալի վաստակի արդյունքում ընթերցողի դատին հանձնվեց Հայոց պատմություն հիմնարար և մնայուն քառասորյակը:

Խորհրդանշական էր, Ա. Մելքոնյանի համեստությունն ու բարի կամեցող լինելու հանգամանքն ընդգծող երևույթ էր նաև այն, որ իր շնարհակալական խոսքի վերջում տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Համո Սուքիասյանին հանձնեց տնօրենի աշխատասենյակի ու սեյֆի բանալիներն ու պարտականությունները բարեհաջող ի կատար ածելու մաղթանքները:

Շնորհավոր հորեյանդ, սիրելի Աշոտ Մելքոնյան. ստեղծագործական նոր ձեռքբերումներ, խաղաղ ու ապահով Հայաստան, առողջ ու թոռնիկահարուստ երկար տարիներ...

Սուրեն Թ. Սարգսյան